

► Ինչ, որանք եզրիստ (անձնատեր - «նՅ») են, եւ այլն... ամէն մէկը իրա ընտանիքի համար, ինչ հասկանում, թէ ինչ աւշանակութիւն ուրիշի համար մի գործ անել առաջը շահի... Գա, ըստ իրենց, նշանակում ա, որ դաւաճանում ես քո ընտանիքը՝ քո թանկ ժամանակը չես յատկացնում քո ընտանիքին: Երբ Հայաստանում սկսուեցին պաշտօնակազմի վերականգնումը՝ 96-97 թուականներին, Ֆրանսայի Armenian Scouts կազմակերպութեան ղեկավարներով որոշեցինք, Հայաստանը արդէն ճանաչուած պետութիւն լինելով, փակելու Ֆրանսայի մեր կազմակերպութիւնը: Ատոր համար՝ ես ազատ էի՝ նոր շարժում մը ստեղծելու, ու անունը դրեցի՝ Հայկական Առաքելական Սկսուողական շարժում, որովհետեւ Ֆրանսայում ընդհանրապէս սկսուողական կազմակերպութիւնները միշտ մի կրօնի հետ կապ ունեն՝ կամ կաթոլիկների, հրեաների, բողոքականների, նոյնիսկ մուսուլմանների սկսուողական, որպէս Հայ, մտածեցի, որ մեր Հայ Առաքելական եկեղեցին պէտք է լինի մեր որոնաշարը, ու սկսուողական կազմակերպութիւնները հետ: Հիմա, այս սկսուողական շարժումը իմ համար միշտ է Հայաստանից եկած հայ պատանիներին համարակից Ֆրանսայի մէջ: (Յետոյ արդէն, առաջին սերունդին երկրաշարժից յետոյ եկածներին, միացան նաեւ փոխատակաւորների գնակները):

Կա մարմինը ու ճիշտ ուղեղը, որ ճիշտ ուղղութեամբ հոգի կայ, արդէն պատրաստ են հինգերորդ ուղղութեամբ գնալու՝ այնինքն ծագելու ուրիշին, դա սկսուող ա կոչում. ես հասկանում եմ, որ բոլորը չեն կրնար սկսուող լինել: մեր մօտ, մօտաւորապէս, երեւի 2000 հոգի անցել են 10 տարուայ մէջ. բայց բոլորը չեն կարողանում մնալ սկսուող. հիմա մօտաւորապէս 200 հոգի ենք: Բայց բազմաթիւ պէտք չի, կարեւորը որակն է: Ինչն է թէ՛ որոշ ժամանակ գալիս են մեր մօտ, դա արդէն օգնում ա իրանց, որ վարի շօնան, խուլիզան շօնան, որովհետեւ էդ գէպերը եղել են: Մի հատուկ գիտեմ, որ 3 ամսուայ մէջ 52 հոտ աւտօ գողացել է նարկոտիկի (Սմրեցուցիչի - «նՅ») հետ կապուած մէկի համար. իրան պարզ ա չեն բռնել, իսկ էդ խեղճ երեխան՝ 18ից մինչեւ 20 տարեկան բերդում (բանտը - «նՅ») նստացրել են: Մենք միշտ կապ պահեցինք էդ ազու հետ, փորձեցինք իրան օգնել: Ես ազատութեան երկրում շատ վտանգաւոր ազատութիւն է իրար հետ են ամենալաւը ու ամենավատը: Իսկ Հայաստանից եկող էդ ընտանիքները առում են մի քիչ գոտոյ ձեւով՝ «մենք Հայ ենք, միշտ էլ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒԺ ՍՈՒՐԷՆԵԱՆ

Երեւանի Յեղասպանութեան թանգարանը հրատարակել է Ռուբինա Փերումեանի «Հայոց Յեղասպանութիւնը գրականութեան մէջ. Յեղասպանութեան ընկալումը այն սերնդի կողմից, որ այդ աղիտալի տարիները ապրեց»*, անգլերէն լեզուով, որը շատ կարեւոր եւ լուրջ ուսումնասիրութիւն է եւ որի բացը երեւի տասնեակ տարիներ է, որ զգացում է: Բնական է, որ նման ու-

սումնասիրութիւններ ոչ միայն տարբեր տեսանկիւններ են բացում հայ գրականութեան առջեւ եղեռնի հետ գէմ առ գէմ գալու պարագային, այլ նաեւ ուղղութիւն են ցոյց տալիս հայ անհատին, թէ ինչպէս կարելի է վերաբերուել այդ ցուտ հարցի հետ, անկախ իր քաղաքական դիրքորոշումներից:

Գալիֆորնիայի Լոս Անջելես համալսարանի դասախօս Ռուբինա Փերումեանը, ում ղոկտորական աւարտաճառը կազմուել է եղեռնի ազդեցութիւնը գրականութեան նիւթի վրայ, իր ուսումնասիրութիւնները կենտրոնացրել է Յեղասպանութեան, եւ մանաւանդ գրականութիւն-Յեղասպանութիւն յարաբերութեան վրայ: Նա մինչ այժմ մի քանի գրքեր եւ բազմաթիւ յօդւածներ է հրատարակել, որոնք բոլորն էլ աւերչում են Յեղասպանութեան

* The Armenian Genocide in Literature: Perception of Those Who Lived Through the Years of Calamity; by Rubina Peroomian, xx + 464 pages, Armenian Genocide Museum-Institute, Yerevan - 2012. (Գրքի հայերէն անունը ըստ գրքի վերջում տեղ գտած հալերէն ամփոփումի):

Հայկը միանք». դա սորո է, այննար է: Ես տեսցի Հայ եմ, իմ ծնողները ստեղ են ծնուել, իմ պապիկ-տատիկները եկել են 20 թուականներին, շատ լաւ գիտեմ՝ ինչ ա նշանակում ազատութեան երկիրը, ու գիտեմ, որ ուղեւորչուկները Հայ մնալը մեր ամէն օրուայ պայքարն է լեզուից բռնած, մինչեւ մեր եկեղեցիի կողմից Յիսուսի խօսքերը: Իրա համար, սկսուողութեան ստեղծողը՝ Պատէն Փոէլ, որ 1907 թուականին հիմնադրել է սկսուողութիւնը, եւ որի հայրը պատուելի էր բողոքական, ասում էր. սկսուողութիւնը ամէն իրպէի քրիստոնէութիւն է:

են ընդգրկուած:

Հ. Սկսուողութիւնը յատուկ ժամկիլ քաղաքը կայ, որ բոլորը կր հաւաքուին:

Պ. Այո՛, մենք էլ ենք դնում, բայց բոլորի նման մտածում ենք եւ մասնակցում ենք այդ ճամբարին: Այդ ճամբարը յատուկ սկսուողների համար չէ, ընտանիքներով էլ են գալիս մարդիկ, բայց ճիշտ է որ սկսուողները շատ են, քանի որ փայտ շատ կայ եւ յարմար է խարոյկներ վառելու համար: Այս տարի էլ, օրինակ, մենք պէտք է գնանք կոնի սկսուողների ճամբարը:

Հ. Փարիզի մէջ սկսուողական խումբ մը կայ...

Պ. Այո՛, ՀՄԸՄ-ը աւելի հին սկսուողական շարժում է, բայց երբեք չկարողացաւ ու չեն ուզել մասնակցել միջազգային շարժման, որովհետեւ, ինչպէս անուսի մէջ էլ երեւում է, ՀՄԸՄ մարզանքի հետ կապ ունի, եւ բացի այդ կապ ունեն Դաշնակցական կուսակցութեան հետ: Իսկ միջազգային սկսուողական շարժման մէջ արգելում է, որ սկսուողական կազմակերպութիւնը կապ ունենայ սպորտային ակումբի կամ կուսակցութեան հետ: Չնայած, կրք որ Աւստրալիայում էինք, ՀՄԸՄ-ի սկսուողները մեզ ընդունեցին շտեմուած լսել ձեռով, իմացանք որ իրենք Աւստրալիայի սկսուողական կազմակերպութեան մէջ

Հ. Դուք գիրար ի՞նչպէս կը կոչեք, եղբայր:

Պ. Հայկական ձեւով՝ «ախպեր շան» (կատակով):

Հ. Իսկ ընդհանրապէս գործունէութիւնները՝ Հայոց լեզու, կրօնագիտութիւն, մարզանք, գուարճանք...

Պ. Մենք ամէն ինչ ունենք...

Հ. Ձեր հաւաքավայրը ո՞ր է:

Պ. Չունենք: Փողոցում ենք հաւաքուում, գրօսայգիներում, անտառներում: Մինչեւ հիմա ոչ մէկը մեզի էզքան լաւ չի օգնում, բայց ոչինչ, մի օր երեւի կ'օգնեն...

Տեսակցեցաւ՝ ԵՐԱՅՐ ԶՈՒՆԵԱՆ

հետ: Իրականում այս յօդուածում ներկայացւած գիրքն էլ, շարունակութիւնն է «Իսկ նրանք որոնք 1915ից լետոյ շարունակեցին ապրել Թուրքիայում. Յետ-Եղեռնեան հայ ազգային ինքնութեան հողովոյցը գեղարուեստական գրականութեան ընդմիջից»** գրքի (տե՛ս. «Հանդէս գրականութեան եւ արւեստի», թիւ 19-20, 2008), իսկ ըստ յառաջաբանում նշուած տեղեկատրութեան, այն դեռ շարունակուելու է երկու այլ հատորներով, որոնցից մէկը թերեւս շուտով պատրաստ կը լինի տպագրութեան:

Գիրքը՝ ներածականից, նախաբանից եւ վերջաբանից բացի, կազմուած է երեք գլխաւոր բաժիններից. «Առաջին սերնդի թողած [գրական] ժառանգութիւնը», «Որբացած սերունդը» եւ «Յուշերի վերանորոգուած յորգանք»: Առաջին սերունդը ներառում է 1915 թուին արդէն քիչ թէ շատ կայացած գրողների, Յ. Օշական, Վ. Քէքէեան, Զ. Եսայեան եւ այլն, ովքեր վերապրեցին Եղեռնը եւ շարունակեցին իրենց ստեղծագործութիւնը Մփիստքում: Նրանք կամ ընդհանրապէս շանդրադարձան Եղեռնին՝ ինչպէս Եսայեանը (թէեւ նա որոշ շրջան աշխատանք տարաւ արձանագրելու վերապրողների եւ ականատեսների յուշերը), եւ կամ միայն աշխատեցին իրենց գործերում վերստեղծել անցեալի կեանքը եւ միջավայրը, ինչպէս Օշականը: Պարզ է որ դէպքերը այնքան անմիջական էին եւ ահաւոր, որ վերապրող գրողների համար անհնարին էր գրանք ստեղծագործական նիւթ դարձնել: Այս բաժնում պատմական դէպքերը բաւականին մանրամասնօրէն եւ պատմում, որը նկատի առնելով գրքի համար նախատեսուած ոչ հայախօս ընթերցողին, բնական է եւ հարկաւոր: Ի հարկէ պէտք է նշել, որ այս բաժինը չի ներառում Ե. Օտեանին եւ նրա «Անհիծեալ տարիներ»ը, որը կենսագրական գործ լինելով հանդերձ, շատ ճշգրիտ է ներկայացնում Յեղասպանութեան կիրառուած ընթացքը Օտեանեան կառավարութեան կողմից:

Երկրորդ բաժնում հանդիպում ենք

այն սերնդին, ովքեր Եղեռնի պատճառով ոչ միայն գրկուեցին իրենց մանկութեան բնականոն կեանքից, այլ նաեւ ստիպուեցին տարագրուել աշխարհով մէկ եւ ապրել իրենց անձանօթ եւ օտար միջավայրում: Ա. Մատուկեանը, Լ. Զ. Սիւրմէլեանը եւ «Փարիզի տղաքը»՝ ընդհանրապէս, Վ. Շուշանեան, Ե. Շահնուր, Ն. Սարաֆեան եւ այլն, պատկանում են այս սերնդին: Հեղինակը մանրակրկիտօրէն ուսումնասիրում է այդ գրողների գործերը. մէջբերումներ կատարելով նրանցից ու համեմատութիւններ անելով հոգեբանական յատկապէս Յեղասպանութեան մասին գրուած գրքերի եւ գրողների գործերի հետ, իր նիւթը ներկայացնում է գիտական լոյսի ներքոյ եւ սա հագուագիտ ներդրում է հայկական գրաքննադատութեան դաշտում: Այդ սերնդին պատկանող գրողների գործերում յաճախ ենք հանդիպում պատահած դէպքերի պատճառների փնտառութիւն, ինքնութիւնը կորցնելու վախին, ինչպէս եւ նրանց ըմբոստացմանը՝ արեւմտեան «քաղաքակրթութեան», նախորդ քաղաքական եւ մտաւորական դէմքերի ու Աստուծոյ հանդէպ: Այս բաժնում նաեւ խօսուած է «Հայրենիք» ամսագրի մասին, որը հսկայական աշխատանք տարաւ վերականգնելու՝ անկման եզրին կանգնած լեռ-եղեռնեան արեւմտահայ գրականութիւնը:

Հետաքրքիր է, որ շնչին բացառութեամբ, վերապրողներն իրենց յուշագրութիւնները Եղեռնի մասին սկսում են լոյս ընծայել բաւականին ուշ, երբեմն նոյնիսկ 50-60 տարի անց, երբ յուշագիրները բաւականին յառաջացած տարիքում են: Թոււմ է, որ ապրած իրավիճակները վերջին նման են, մի կողմից գժուար է գրա հետ ապրել, սակայն դրան ձեռք տայն էլ աւելի մեծ ցաւ է պատճառելու: Բայց վերջիվերջոյ վերապրողը որոշում է բացել այդ վերքն ու մասամբ թեթեւացնել ցաւը, մանաւանդ երբ պատասխանատուութիւն է գգում դժբախտ զոհերի դիմաց, ովքեր բախտը շունեցան ողջ գուրս պալու այդ արհաւիրքից: Փիրումեանը շուրջ տասներկու յուշագրութիւն է ընտրել եւ ներկայացրել գրքում: Մէկը միտինգ աւելի սրտառու է յուզիչ: Իհարկէ սրանք միայն մի փոքրիկ օրինակ պիտի համարել այն բոլոր գրուած ու չգրուած, կամ գրուած ու չհրատարակուած յուշերից, որոնք ապրուել են մի ժողովրդի կողմից, որ դժբախտութիւն էր ունեցել լինել քաղաքացի մի այնպիսի դաժան համակարգի, որը պատրաստ էր ամենայն ստոնասարտութեամբ սրի քա-

շել հպատակների մի մեծ հատուածի: Սակայն հէնց դա էլ բաւական է մեր առջեւ բացելու մարդկային մեծագոյն ողբերգական էջերից մէկը: Այս յուշագրութիւնները թէեւ կարող են շունենալ գեղարուեստական արժէք, բայց յոյժ կարեւոր փաստագրութիւններ են այն մասին, թէ՛ մարդը մինչեւ ինչ աստիճան կարող է ստորանալ եւ ստորացնել իր նմանին: Դրանք նաեւ կարող են ուղեցոյց դառնալ պետութիւնների համար, որպէսզի նման արհաւիրքներից խուսափեն ու խափանեն գրանց կրկնութիւնը: Այստեղ դարձեալ Փիրումեանը աշխատում է հոգեբանօրէն մօտենալ յուշերի հեղինակներին եւ այդ անկիւնից դիտել նրանց ներաշխարհը. տարիների լուսութիւնը, օգտագործած լեզուական ոճը եւ նրանց ըմբռնուող դէպքերից: Մի հետաքրքիր կէտ, որին հեղինակը չի անդրադարձել, յուշագրիչների մեծամասնութեան բողոքական լինելն է, ովքեր այդ ժամանակ համագործակցում էին ամերիկեան աւետարանական կազմակերպութիւնների հետ: Այս բաժինը շատ ճնշիչ է եւ ընթերցողը դժուարութեամբ է առաջ տանում ընթերցանութիւնը:


Ինչպէս ներածականից է յայտնուած, նշուած ճնշումը զգացել է նաեւ Ռ. Փիրումեանը, որը յառաջացել է նրա տարիներ շարունակ Յեղասպանութեանը վերաբերող նիւթերն ուսումնասիրելու եւ վերապրողների հետ շփուելու բերումով: Նրա համար այդ նիւթերի ուսումնասիրութիւնը փոխուել է սեւեռուն գաղափարի, որի համար գրքում նոյնիսկ փորձել է պատճառներ փնտել իր անձնական կեանքում՝ այդ կէտին հասնելու համար: Սա պարզ ապացոյց է Ռ. Փիրումեանի նուիրւածութեանը՝ հանդէպ իր այդքան կարեւոր ընտրած աշխատանքին: Նա ակնարկում է, որ Յեղասպանութեան մասին գրելը թեթեւացնում է այդ ճնշումը: Վահագն Գրիգորեանն էլ պատմում է, որ երբ՝ որպէս յատուկ յանձնախմբի անդամ, ամիսներ շարունակ աշխատել է Յեղասպանութեան նիւթերի վրայ, որպէսզի յանձնախումբը կարողանայ համոզիչ գեղոյց ներկայացնել կատարյալ խորհրդարանին, Հայոց Յեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունելու նպատակով, ենթարկուել է նման ճնշումի եւ «ստիպուած» է եղել գրել «ժամանակի գետը» վէպը, ազատուելու համար այդ ճնշումից: Վատահարար, հէնց այդ գրելու ինքնամաքրման (cathartic) յատկութիւնը մէկն է այն պատճառներից, որը որոշ վերապրողներին մղել է գրելու իրենց յուշերը:

** And Those Who Continued Living in Turkey after 1915: The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature; by Rubina Perroomian, vi + 249 pages, Armenian Genocide Museum-Institute, Yerevan - 2008. (Գրքի հայերէն անունը ըստ գրքի վերջում տեղ գտած հայերէն ամփոփումի):

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԹԼԵԹԻԶՄ

Աթլետիկայի միջազգային դաշնակցության հիմնադրման 100ամեակը նշելու նպատակով, անցեալ ամսուան վերջաւորութեան Երեւանի մէջ յատուկ մրցաշարք մը կազմակերպուեցաւ, բաղկացած 9 տարբեր մրցումներէ (վազք, օստում, արձակում): Իրաքանչիւր մրցումի առաջին երեքը պարգևատրուեցան, բայց փալոյղ մարզիկը եղաւ անկասկած՝ Լուսինէ Քարապան, որ յաղթականը հանդիսացաւ 100 եւ 200 մեթր վազքերուն: Այս աղբիւր, յայտա-



Աթլետիկայի միջազգային դաշնակցութեան 100ամեակին առթիւ Երեւանի մէջ կազմակերպուած մրցաշարքէն տեսարան մը

բարուեցաւ նաև միջազգային մակարդակով մրցումներ հիւրընկալելու պատշաճ ամբիթիկայի դաշտի մը շինութեան ծրագիրը:

ՖՈՒԹՊՈՒ

Եւրոպայի ախոյեաններու լիկայի որակման մրցումներու Ա. շրջանէն զերծ կացուցուած Երեւանի «Ալիս»ը, յաջորդ հանգրուանին, Երթի մրցումին իր դաշտին վրայ 0-1 պարտուեցաւ Մոլտաւիոյ Թիրասպոլ քաղաքի «Շէրիֆ» խումբէն: Յուլիս 24ին գարձի մրցումին ալ նոյն

արդիւնքով պարտուեց Ետր, հայրենի խումբը հետագա մրցաշարքէն:

Եւրոպայի լիկայի որակման Բ. շրջանի մրցումներուն Գիւմրիի «Շիրակ»ի եւ Կապանի «Գանձասար»ի ճակատագիրն ալ նոյնը եղաւ: Յուլիս 19ի Երթի մրցումներուն «Գանձասար» 0-2 պարտուելէ Ետր ժրնելի Սերվիլիէն, Յուլիս 26ին, իր դաշտին վրայ ալ 1-3 պարտուելով, դուրս մնաց: Գիւմրիի «Շիրակ»ն ալ Երթի մրցումին նոյնպէս 0-2 պարտուելէ Ետր Թէլ-Ավիվի «Պնէ-Ենուպա» խումբէն, դարձի մրցումին եւ 0-1 պարտուելով, ստիպուեցաւ հեռանալ Եւրոպայի լիկայի բաժակի խաղերէն:

ԸՄԲԵՍԱՄԱՐՏ

Երիտասարդներու «կրափլինկ» ոճի Եւրոպական Քայ մրցաշարքին, որ տեղի ունեցաւ Յուլիս 7ին եւ Տին Մոսկուայի մէջ, Աբրահիմայէն

Մարք Մարգարեան շահեցաւ տիտղոսը՝ 14-15 տարեկան դպրոցականներու 73 քի. դասակարգին մէջ, իսկ Ռուսաստանէն Անտոն Տօնոյեան ալ երկրորդ հանդիսացաւ՝ 59 քի. դասակարգին մէջ: Կրափլինկը ըմբշամարտի ոճ մըն է, որ յատկապէս կը կարանայ մրցակցին վրայ հակակշիռ հաստատելու եւ զայն ենթարկելու վարպետութիւններու մէջ:

Յուլիս 17ին 22, Ահապտանի Քաթովիչէ քաղաքին մէջ տեղի ունեցած ըմբշամարտի Եւրոպայի կրտսերներ-

րու ախոյեանութեան կը մասնակցէին շուրջ երկու տասնեակ հայ մարզիկներ: Անոնց կէսը յաջողեցաւ պատուանդան բարձրանալ, նոյնիսկ երեքը՝ բարձրագոյն աստիճանին: Այսպէս, ազատ ոճի ըմբշամարտի 54 քի. մրցումներուն Արման Խաչատրեան, յունահունական ոճի 42 քի. եւ 58 քի. դասակարգերուն յաջորդաբար՝ Վահէ Սարգսեան եւ Կարէն Ասլանեան նուաճեցին Եւրոպայի ախոյեանի տիտղոսներ: Գարձեայ յունահունական ոճին մէջ Կեղամ Քորդոմեան (50 քի.) եւ Արմէն Յակոբեան (69 քի.) երկրորդ տեղեր գրաւելով շահեցան արծաթեայ մետալներ, իսկ Տարօն Թումոյեան (54 քի.) եւ Տիգրան Աբրահամեան (63 քի.) երրորդ աւարտելով պրոնզեայ մետալներ: Նոյնպէս պրոնզեայ մետալի արժանացան նաև Մխիթար Գրիգորեան (42 քի.), Հմայեակ Աղաջանեան (46 քի.) եւ Ռազմիկ Պօղոսեան (76 քի.), բայց ազատ ոճի մէջ:

ՃԱՏՐԱԿ

Հայաստանէն Մարիա Գեջրգեան նուաճեց -18 տարեկաններու արագ ճատրակի Եւրոպական տիտղոսը: Մրցաշարքը տեղի կ'ունենար Պոսնիոյ Վրուչիչա քաղաքին մէջ, Յուլիս 14ին 19:



Մարիա Գեջրգեան

ՋՐԱՑԱՏՔ (ՓԼՈՆՇՈՒՄ)

Երիտասարդներու Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի ունեցան Այստրիոյ Կրաց քաղաքին մէջ, Յուլիս 14ին 15, Հայաստանէն 14ամեայ Վրայիմիր Յարութիւնեան շահեցաւ պրոնզեայ մետալ՝ 10 մեթր բարձրութենէլ ջրատրի 14-15 տարեկաններու դասակարգին մէջ: Իր երկրորդականը Ազատ Յարութիւնեան նոյն մրցումին գրաւեց 7րդ տեղը:

ԵՂՈՒԱՐԳ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ինչպէս վերը նշուեց, Փիրումեանը գրքի ներածական բաժնում, որը որպէս անձնական նօթագրութիւն է ներկայացնում եւ ուր բացատրում է թէ ինչու է ընտրել զեղասպանութեան գրականութիւնը որպէս մասնագիտական ճիւղ, յայտնում է թէ շարքը համարուելու է երկու այլ հատորներով, որոնցից առաջինը ընդգրկում է Յեղասպանութեան գրականութիւնը Սփիւռքի երրորդ սերնդի գրողներին մօտ եւ յաջորդը նոյն գրականութիւնը հայաստանեան գրողների գործերում: Պէտք է անհամբերութեամբ սպասել այդ հատորներին, որովհետեւ ինչպէս գիտենք վերջին տարիներում հետաքրքիր գործեր են հրատարակուել այս ուղղութեամբ,

ինչպէս՝ Գ. Պրլտեանի «Անունը լեզուի տակ»ը եւ Փ. Պալաքեանի «Ճակատագրի սեւ շունը»ն, իսկ միայն վերջերս է ուսումնասիրութեան ենթարկուել Գ. Մահարու այդչափ կարեւոր եւ նոյնչափ հայածուած «Այրուող այգեստաններ»ը, եւ հետաքրքիր է լինելու Փիրումեանի վերաբերմունքը այդ վէպի նկատմամբ, իհարկէ եթէ ներսուի յիշեալ հատորում: Թ. Փիրումեանի գիրքը, Հայոց Յեղասպանութիւնը օտարներին ծանօթացնելուց բացի, կարեւոր աղբիւր պէտք է համարել հայ գրաբնագիտութեան զաշտում, հետեւաբար պէտք է յուսանք, որ շուտով ականատես ենք լինելու դրա հայերէն թարգմանութեանը եւս:

Վ. Ա.